ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 10>> Հունվարի 2013թ. N: 02 ք.Գյումրի

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1792-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կանոնադրության>> 23-րդ կետի <<բ>>, <<ե>> և <<ժդ>> ենթակետերի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին գույք ամրացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> թիվ 1390-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 3 - րդ կետի կատարումը ապահովելու նպատակով.

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել նախկին <<Շիրակի մարզային հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության և <<Գյումրու Գ. Գյուլբենկյանի անվան վիրաբուժական հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության մասնաշենքերը (այսուհետ՝ Գույք) հանձնող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին՝ սահմանված կարգով և ժամկետում ապահովել Որոշմամբ նախատեսված Գույքի հանձնման աշխատանքների կատարումը:

Ա. ԳԻՉԻՐՅԱՆ

Հավելված

ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի
հունվարի 10 -ի թիվ-02-կարգադրության

ԿԱԶՄ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՆՁՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հովսեփ Սիմոնյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
Անահիտ Սահակյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
Հայկուշ Ավետիսյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
Գագիկ Հարությունյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,
Խաչատուր Կարապետյան	<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ վնասվածքաբանական բաժանմունքի վարիչ, հանձնաժողովի անդամ,
Սաթենիկ Բեյբության	<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ դիագնոստիկ բաժանմունքի վարիչ, հանձնաժողովի անդամ,
Լաուրա Սեխլեյան	<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ հաշվապահ, հանձնաժողովի անդամ,
Անահիտ Մարգարյան	<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ հաշվապահ, հանձնաժողովի անդամ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Խ. ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝